



ՎԵՋ. Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Վերադարձին՝ ժամանակ մը կ'առանձնանայ Սուչովայի Հաճկատար վանքը՝ կ'աւարտէ Պուրէշի աստուածաբանական համալսարանը եւ կը նշանակուի Ռումանայ թեմի Առաջնորդական Տեղապահ:

1945ին կը մասնակցի Էջմիածնի ազգային եկեղեցական ժողովին: 1948ին կը ստանայ Ծայրագոյն Վրդ. ի աստիճանը. եւ մինչ Ռումանայ նոր Առաջնորդը՝ Սուրէն Եպիսկոպոս, կարճատեւ պաշտօնավարութենէ մը վերջ Էջմիածին կը հրաւիրուէր, Վազգէն Վրդ. կը յաջորդէ անոր:

1951ին Եպիսկոպոս կը ձեռնադրուի. 1954ին կ'ընտրուի անդամ Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի, եւ կ'անուանուի նաեւ ժամանակաւոր Առաջնորդ Պուլկարայ թեմի:

Իր պաշտօնավարութեան ընթացքին յաճախ առիթը կ'ունենայ ուղեւորելու դէպի Հայաստան եւ ծանօթանալու նաեւ օտար եկեղեցական շրջանակներու: Անցեալ տարի հրատարակեց իր խանդավառ յուշերը «Հայրենի արեւին տակ» ախորհուրդ: Ռումանական կառավարութենէն եւս շատ յարգուած, ստացած է «Հանրապետութեան աստղ» շքանշանը:

Նշանակալից կէտ մը այս ընտրութեան պատճառան դէպքին մէջ, Վազգէն Ա. Կաթողիկոսի արտասահմանեան ծաղումն է: Գաղութահայ մըն է Նորընտիր Գահակալը, որ ծլած արտասահմանի մէջ, պիտի ծաղկի ու պտուղ տայ աւելի Գահակալը, որ ծլած արտասահմանի մէջ, պիտի ծաղկի ու պտուղ տայ հայրենի հողին վրայ: Այս պարագան մեզի չի՞ յիշեցնէր արդեօք «Մուսա Լեւոն հայերը» դրբի հեղինակին վերջաբանը, որ վերլուծելով Վիեննայի մեծ վիպագրին անմահ հերոսը, կը գրէր նոյն ինքն ապագայ Կաթողիկոսը.

«Ահա գաղութահայու տիպար մը՝ որ լուռ ու մունջ ապրելով գաղութի մը մէջ, երբեք չի պարծենար մեծ մեծ խօսքերով. բայց երբ գերագոյն պահը կու գայ, ներկայ է այնտեղ, հայրենի հողին վրայ, պաշտպանելու եւ մեռնելու համար իր ազգին ու հայրենիքին պատուին ու ազատութեան ի խնդիր...: Արդեօք պիտի կարենա՞նք ըսել քեզ փրակն Վերադարձի ալ իրականութիւնը կը կանխէ իր վէպին մէջ, ստեղծելով այն գաղութահայերը՝ որոնք իրապէս պիտի ծլին մեր գաղութներուն մէջ ու պիտի ծաղկին եւ պտուղ տան հայրենի հողին վրայ: Պիտի ծնին արդեօք իրական Բագրատեաններ, Աւագեաններ ու Ստեփանեաններ, որոնք անոնց ձեռով, կամ այլ ձեռքով կարենան ստեղծել իրենց նախնային աշխարհին մէջ՝ կեանքի եւ արժէքներու նոր կորովներ, ի փառս հայ հոգիին եւ կեանքի ոյժին» (Անդ, էջ 51-52):

Ու հիմա հերթը Վազգէն Ա. Կաթողիկոսինն է: Մարդարէական շունչով 15 տարի առաջ արձանագրուած այդ տողերը՝ թող իրականանան այժմ Էջմիածնի Նորընտիր Գահակալի անձին մէջ, եւ ըլլան դրաւականը ապագայ փայլուն շրջանի մը եւ ազգօգուտ գործունէութեան մը: Գաղութահայ ծաղկին ըլլայ Ան, որ ահա կը բացուի Արարատի լանջին. թող ըլլայ նաեւ խորհրդանշը ազգային սերտ միութեան, Սիւրբի եւ Հայրենիքի:

Հ. Ն. ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ